Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 220 - Ա
որոշման

«ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ԵՎ ՎԱՀԱԳՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Անտառամուտ և Վահագնի բնակավայրերի թվով 16 ընտանիքների համար 3,6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանների տեղադրում, որի արդյունքում շահառու ընտանիքները էներգետիկ որոշակի անկախություն կստանան, և դրա շնորհիվ խնայված միջոցները այդ ընտանիքները կուղղեն իրենց ընթացիկ սոցիալական կարիքների բավարարման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Շվեյցարական «Լիթլ բրիդջ Շվեյց» բարեգործական հիմնադրամ (Շվեյցարիա, 7000 Չուր)
4.	Ծրագիրը կատարողը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 24 շենք, բնակարան 30, ՀՎՀՀ՝ 00472741)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Անտառամուտ և Վահագնի բնակավայրեր, բնագավառ՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Անտառամուտ և Վահագնի բնակավայրերի կարիքավոր ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի մայիսի 1-ից մինչև 2026 թվականի մայիսի 25-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Անտառամուտ և Վահագնի բնակավայրերում 16 ընտանիքների բնակելի տների համար մեկական հատ 3,6 կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների մատակարարում և տեղադրում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի մայիսի 1-ից մինչև մայիսի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ 12,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Արևային էլեկտրակայանների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 12,000,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռու մարզի Փամբակ համայնքի համայնքապետարան, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Շվեյցարական «Լիթլ բրիդջ Շվեյզ» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

15.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ